

Երգիծական խոսույթի ժանրային հատկանիշները

Սույն հոդվածում քննարկվում է անեկդոտի ժանրը, քանի որ այն հատուկ հետաքրքրություն է ներկայացնում հաղորդակցային լեզվաբանության համար որպես հաղորդակցական վարքի նմուշօրինակի հետազոտության առանձնահատուկ աղբյուր, որը թույլ է տալիս վեր հանել հանրամշակութային կարծրատիպերը: Խոսքային այդ ժանրը պատկանում է բանավոր հաղորդակցությանը, որին բնորոշ է իրավիճակային թեմայի և ընթացիկ հաղորդակցական իրավիճակի համատեղումը Անեկդոտները, անշուշտ, արժանի են հատուկ ուսումնասիրության. դրանք տարածված են ցանկացած ներազգային լեզվամշակույթում:

Բանայի բառեր. երգիծական խոսույթ, անեկդոտ, հումոր, ժանր:

Երգիծական խոսույթը դիտարկվում է որպես հաղորդակցային բարդ երևույթ, որը ներառում է սոցիալական համատեքստը, պատկերացում է տալիս հաղորդակցության մասնակիցների և նրանց բնութագրերի մասին: Երգիծական խոսույթը բնութագրվում է իրականության նկատմամբ, առանձնահատուկ երգիծական վերաբերմունքով, որն արտահայտվում է ազդեցության օբյեկտի՝ գործողու-

թյամբ կամ մտքով իրեն սկզբունքորեն ոչ հատուկ հնարավորությունների դաշտի հետ համադրմամբ: Երգիծական խոսույթի բնութագրական հատկանիշներն են.

– շփման մասնակիցների հաղորդակցային մտադրությունը^ա խուսափելու լուրջ գրույցից,

– շփման երգիծական տոնայնությունը, այսինքն^ա արդիական հասկացույթները մեղմ ձևով քննադատաբար վերաիմաստավորելու և տարածությունը կրճատելու ձգտումը,

– ծիծաղաշարժ վարքի որոշակի ձևանմուշների առկայությունը, որոնք ընդունված են տվյալ լեզվամշակույթում (В.И.Карасик, 2002:252):

Երգիծական խոսույթի վերլուծության նմուշօրինակն ընդհանուր առմամբ կառուցվում է երեք հատկանիշների հիման վրա^ա երգիծական մտադրության, երգիծական տոնայնության և երգիծական վարքագծի կարծրատիպեր:

Երգիծական խոսույթի հիմնական ժանրը կատակաբանությունն է. երգիծական խոսույթով հաղորդագրություն ուղարկողն ակնկալում է, որ խոսակիցը կճանաչի կատակաբան խոսքային ժանրը, կառանձնացնի ակնկալելիք տեղեկատվություն, և իր ըմբռնումը ծիծաղով ու ժպիտով կդրսևորի: Կոմիկականի, հետևաբար և հումորի հիմնական հատկանիշը ծիծաղն է, որը բնածին արձագանք է և իր հուզական երանգավորմամբ և առաջացման պատճառներով բավականին բազմազան է:

Տեքստը հասկանալու համար հասցեատերը պետք է ծանոթ լինի այդ ժանրին: Մարդիկ գիտեն հասարակական

այն ավանդույթների փոխադարձ կապի մասին, որոնցից բխում է կատակը, և առանց որոնց այն չի հասկացվի: Կատակաբան ժանրի մասն է կազմում ճիշտ հասկանալը և ընկալելը (Е.Я. Шмелева, А.Д. Шмелев, 1998):

Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ջ. Սաննիկովը, յուրաքանչյուր կատակ հումորի, հեզնանքի կամ երգիծանքի ուղղվածություն ունի, սակայն, ի տարբերություն հումորի, հեզնանքի և երգիծանքի, որոնք ասես ցրված են ամբողջ տեքստում, կատակը ստեղծագործության կառուցվածքում պահպանում է ինքնուրույնությունը և կարող է այնտեղից հանվել: Ավելին, կատակը սահմանափակ ծավալով ամբողջական տեքստ (կամ տեքստի ինքնուրույն տարր) է՝ կոմիկական բովանդակությամբ (Санников В.З. 2002):

Յու. Վ. Շչուրինյան դիտարկում է երգիծական խոսքային ժանրերը և նրանց մեջ առանձնացնում կատակը, անէկդոտը^ա շփման կենցաղային ոլորտում, երգիծական ասացվածքը, երկխոսային մանրապատումը, մակագիրը (էպիգրամ) և այլն: Ընդ որում, կենցաղային կատակաբան ժանրը համարվում է երգիծական առաջին խոսքային ժանրը (Шурина Ю.В. 1999: 151): Դ. Բոքսերն ու Ֆ. Կորտես-Կոնդեն (Boxer D., Cortes-Conde F. 1997: 279) առանձնացնում են կենցաղային հումորի երեք տեսակ՝ *teasing, joking about an absent other, self-denigrating joking*:

Հումորը թույլ է տալիս կրճատել սոցիալական հեռավորությունը և խմբային նույնականացման միջոց է համարվում: Այն հաղորդակցության մասնակիցների կողմից իրականացվում է՝ համընդհանուր արժեքներին դիմելու հաշ-

վին: Հումորն արտացոլում է մշակութային արժեքներ և նպաստելով ներխամբային համախմբվածությանը. մշակութային արժեք է ներկայացնում:

Հումորի ընկալումը կախված է երեք գործոններից^ա հաղորդակցական իրավիճակից, հաղորդագրություն ուղարկողից և այն ստացողից: Հաղորդագրություն ուղարկողն ու ստացողը բարդ փոփոխակներ են, որոնց նշանակությունները որոշվում են բազմաթիվ գործոններով, այդ թվում՝ դրանց հենց հաղորդակցական իրավիճակ ստեղծելու մասնակցությամբ: Հումորային ակտի արդյունքը իրավիճակի մասնակիցների ընկալունակության մակարդակի փոփոխությունն է (Ю.В. Шурина, 1999):

Հումորը կապված է հուզական շփման հետ, և հուզական տրամադրվածությունը հաճախ վճռորոշ է դառնում ընկալման համար: Առանձնացվում են հումորի երկու հիմնական տիպեր^ա իրադրական և լեզվաբանական: Վերջինս կապված է լեզվական զանազան միջոցների հատուկ կիրառության հետ, որոնք երգիծական տպավորություն են ստեղծում: Որպես կանոն^ա այդպիսի կիրառությունն ուղեկցվում է արտահայտությունների երկիմաստությամբ, հետևաբար^ա դրա ոչ միանշանակ մեկնաբանությամբ: Բառային, բառակազմական, շարահյուսական տարբեր մակարդակների միավորներ կարող են լեզվական հիմք դառնալ:

Ժամանակակից անեկդոտները ներկայանում են, որպես բազմակողմանի երևույթներ, որոնք լեզվաբանական, գրականագիտական, սոցիոլոգիական, մշակութաբանա-

կան, հոգեբանական և պատմաքաղաքական վերլուծությունների առարկա են դառնում:

Ի տարբերություն գրական անեկդոտի³ ժամանակակից անեկդոտը բացառապես խոսքային (այլ ոչ թե գրական) ժանր է: Պետք է տարանջատել անեկդոտ պատմելը⁴ որպես բանավոր խոսքային ժանր, և անեկդոտի տեքստը⁵ այն, ինչ վերարտադրվում է տվյալ խոսքային ժանրը իրացնելիս: Ընդ որում, անեկդոտ պատմելու խոսքային ժանրի գործառության ժամանակ հենց անեկդոտի տեքստի դերով է որոշվում դրա առանձնահատկությունը: Անեկդոտ պատմելը խոսքային այլևայլ ժանրերից տարբերվում է նրանով, որ պատմողը երբեք չի ներկայանում որպես անեկդոտի տեքստի հեղինակ: Երբ մարդը կատակում է, ենթադրվում է, որ ինքն է հորինել կատակը. ուրիշի կատակը վերապատմելը չի նշանակում, որ ինքդ ես կատակում: Իհարկե, կարող է այնպես պատահել, որ մարդը կրկնի ուրիշի կատակը⁶ այն ներկայացնելով իրենը: Մինչդեռ անեկդոտը, եթե նույնիսկ մարդն ինքն է հորինել, նա պետք է պատմի որպես ուրիշներից լսած: Դրանով իսկ անեկդոտը բնութագրվում է վերարտադրելիությամբ: Այդ առումով անեկդոտ պատմելը որոշ չափով հիշեցնում է խոսքային այն ժանրերը, որոնցում օգտագործվում են կաղապարային բանաձևեր: Թեև պատմողն անեկդոտը մատուցում է որպես ուրիշներից լսած, նա միաժամանակ հույս ունի, որ այն լսարանին ծանոթ չէ, որ լսողները (ծայրահեղ դեպքում նրանց մի մասը) նախկինում այն չեն լսել: Այս առումով անեկդոտի տեքստը չի կարող դիտվել որպես լեզվակաղա-

պար բառիս բուն իմաստով, որը բնութագրվում է ոչ միայն վերարտադրելիությանը, այլև նրանով, որ խոսքային հաղորդակցության մեջ դրա գործածությամբ ենթադրվում է մասնակիցներին հայտնի լինելով: Եթե անեկդոտը, պարզվում է, ծանոթ է բոլոր լսողներին, ապա կարելի է համարել, որ անեկդոտ պատմելը կայացել է (և այդ իմաստով ժանրը չի խաթարվել), սակայն եղել է անհաջող: Անեկդոտի տեքստի բազմակի վերարտադրելիությունը, որը նաև թույլ է տալիս որոշ չափով տարբերակային փոփոխություններ անել^ա կախված հասցեատիրոջից կամ հաղորդակցական իրավիճակից, մերձեցնում է անեկդոտը խոսքային այնպիսի ժանրերի, ինչպիսիք են գրական անեկդոտն ու առակը: Սակայն այդ ժանրերը տարբերվում են գործող անձանց կազմով և նրանց ներկայացման ձևերով:

XX դարի ընթացքում արտասահմանյան հետազոտություններում ի հայտ եկան անեկդոտ եզրույթի տարբեր ընկալումներ: Համաձայն “Պարզ ձևերի հանրագիտարանի” (Simple Forms 1994)^ա անեկդոտը “*anecdote*” կարճ, հաճախ բարոյախրատական պատմություն է նշանավոր մարդկանց մասին և ներկայացնում է անեկդոտի հերոսին որպես որոշակի հանրային խմբի կամ ժամանակաշրջանի ներկայացուցիչ:

Ցայժմ օգտագործվող սահմանումները սովորաբար հաշվի են առնում անեկդոտի բնութագրական երեք տարատեսակները, որոնք առաջին անգամ մանրամասնորեն վերլուծել է Ա. Պ. Պելտցերը^ա անեկդոտի ծագմանը նվիրված իր հիմնարար աշխատությունում. հունարենում անեկդոտ

(ἀνεκδοτον) բառը նախապես նշանակել է հասարակությանն անհայտ ստեղծագործություն: Հետագայում անեկդոտը սկսեց նշանակել նախկին հեղինակների, առավելապես պատմաբանների կողմից չհիշատակված որևէ բնութագրական փաստ, դեպք: Կամենալով միմյանց զարմացնել կարդացածությամբ^a պատմաբանները ճոխացնում էին իրենց աշխատությունները տարբեր մանրամասներով, որոնք ոչ միայն ոչ մի առնչություն չունենին պատմության հետ, այլև հաճախ երևակայության ոլորտից էին: Պատմական մանրամասներին համահավասար այդ եզրույթի ներքո սկսեցին ենթադրվել առհասարակ քիչ թե շատ հետաքրքիր առանձին փաստերը, գլխավորապես սրամիտ պատմվածքները, որոնք ապշեցնում էին իրենց անսպասելիությամբ և թեթևությամբ (Пельцер А. П. 1899):

Անգլիական լեզվամշակույթում համանման հասկացությունը կոչվում է *joke, canned joke, funny story*: Ֆրանսիացիները անվանում են *histoire* կամ *histoire amusante*: Գոյություն ունեն մի քանի հատուկ եզրույթներ, որոնք բնորոշում են *“jokes”*-ի տարբեր տեսակները՝ *numskull tale, ethnic slurs* (հայերենում բոլորն էլ կոչվում են *անեկդոտ*):

Անեկդոտը, ինչպես և ցանկացած տեքստ, որը պատկանում է առանձին ժանրի, օժտված է կառուցվածքով, ձևով ու բովանդակությամբ: Դրանում արտացոլվում է աշխարհի ազգային պատկերը, խաղարկվում են նախադեպային իրավիճակներ և գոյություն ունեն նախադեպային գործող անձինք, ուստի անեկդոտը կարելի է դասել նախադեպային տեքստերի շարքին: Կարծրատիպային հատկա-

նիշների հարաբերակցությունն էլ հենց անեկդոտի ինքնատիպության վկայությունն է որպես խոսքային շփման ժանր, որպես խոսքի մշակույթի երևույթ:

Մի կողմից անեկդոտը պարզ, հաճախ նույնիսկ պարզունակ կարճ պատմություն է առօրյա կյանքի մասին, մյուս կողմից աշխարհի առաջատար մարդաբանների, փիլիսոփաների, բանասերների և հոգեբանների մանրակրկիտ հետազոտությունների առարկա: Անեկդոտը դիտարկում է փաստերը առտնին կյանքի կտրվածքով, որտեղ ամեն ինչ անդադար փոփոխվում է, իրար վրա կուտակվում և անհետ կորչում: Անեկդոտը փաստորեն արժեքների չի վերածում, քանի որ այն պատմում են միայն ծիծաղեցնելու համար: Անեկդոտի գլխավոր խնդիրը ծիծաղն է և պատճառած առանձնահատուկ հաճույքը, և ոչ թե նրա ճշմարիտ լինելը: Անեկդոտի համար ծիծաղը գրավական է, որը հաստատում է դրա հետագա կյանքի իրավունքը: Հետազոտողները պնդում են, որ ժամանակակից անեկդոտները պատմականորեն ծնունդ են առել նշանավոր և մեծ մարդկանց կյանքի ծիծաղաշարժ պատմություններից: Անեկդոտն իր հերոսներին անդադար հավասարեցնում է սովորական մարդկանց, զրկում նրանց վեհությունից, իրենց տեղը դնում, այսինքն՝ երկնքից իջեցնում երկիր:

Անեկդոտի ձևերի ողջ առատությամբ ու բազմազանությամբ հանդերձ գոյություն ունի ժանրի անփոփոխ մի կառուցվածք, որը թույլ է տալիս այն տարբերել խոսքարվեստի ժանրային մյուս կազմավորումներից, իսկ դրա շրջանակներում լավ անեկդոտը միջակից կամ առհասարակ

վատից: Առաջին հերթին դա հակիրճությունն է: Որքան կարճ է անեկդոտը, այնքան ավելի է համապատասխանում ժանրային առանձնահատկությանը: Երկրորդ՝ դրա սյուժետային կառուցվածքը պետք է հնարավորինս հստակ հանդես բերի պատմողական սյուժեի դասական եռամաս դասավորությունը ներածություն-ինտրիգի առաջադրում – գործողության ծավալում դրա անկանխատեսելի ավարտով – անսպասելի հանգուցալուծում: Անեկդոտների մեծ մասը հեղինակ չունի: Այս տեսանկյունից անեկդոտը ազգակից է առասպելին, լեգենդին, հեքիաթին և այլ անանուն ստեղծագործությունների:

Անեկդոտի ժանրային էությունը սովորաբար հանգեցնում է կարճ պատումի անսպասելի սրամիտ ավարտին: Այսինքն անեկդոտի կառուցվածքային հատկանիշները, որոնք կազմում են դրա ժանրային միջուկը, յուրահատուկ ձևով կապված են անեկդոտի հորինվածքային գագաթնակետի հետ: Պատումն ինքը կարող է ունենալ ցանկացած խոսքային կառուցվածք: Մակայն իրագործվում է որպես սրամիտ խաղ: Այսպիսով, անեկդոտի էությունը կարելի է հանգեցնել համատեքստի անսպասելի փոխարինմանը, որը ոչ խոսքային իրավիճակի լարվածությունը հանում է ոչ սովորական խոսքային եղանակով:

Բոլոր անեկդոտներն ու կատակները կարելի է դասակարգել տարբեր չափորոշիչների հիման վրա: Համապատասխան տեքստերի առավել հաճախադեպ հատկանիշներն են թեմատիկան և աղբյուրը: Առանձնացվում են կենցաղային, քաղաքական, առողջապահական, բանակային,

թատերական անեկդոտները, հարբեցողների, անհավատարիմ ամուսինների, մարդկային այս կամ այն հատկությունները մարմնավորող կենդանիների մասին անեկդոտները, մի կողմից՝ որոշակի ազգությունների և սոցիալական խմբերի ներկայացուցիչների մասին, և մյուս կողմից անգլիական, ֆրանսիական, ռուսական, հայկական, վրացական, ուկրաինական, հրեական անեկդոտները:

Անեկդոտի տեքստը, ինչպես նախնական բանավոր, այնպես էլ հաջորդող գրավոր ձևով, գրեթե միշտ կառուցվում է երկբաղադրիչ սկզբունքով՝ ունի նախադրություն և հանգուցալուծում, կամ սկիզբ և ավարտ: Սկիզբը լսողին ծանոթացնում է բովանդակությանը, թեմային, ինտրիգին, ստեղծում սպասման լարվածություն: Անեկդոտի մուտքը կարող է լինել ծավալուն: Օրինակ՝ անեկդոտի սկիզբը կարող է կառուցվել ավանդական կենցաղային հեքիաթի օրենքներով՝ իրադարձության եռակի (ըստ գործող անձանց և նրանց գործողությունների թվի) կերպափոխմամբ: Մինևույն ժամանակ, անեկդոտի հանգուցալուծումը՝ անկախ ամբողջ տեքստի ծավալից, միշտ պետք է լինի հակիրճ, անսպասելի, հաճախ տարօրինակ, որն էլ սովորաբար անեկդոտը դարձնում է ծիծաղելի: Հանգուցալուծմանը պարտադիր նախորդում է գլխավոր դադարը, որը բաժանում է տեքստը երկու անհավասար մասի (Химик В.В. 2002: 28):

Այսպիսով, անեկդոտը ոչ միայն երգիծական տեքստ է, այլև ժանրային նախադեպային տեքստ, որն ունի յուրօրինակ կառուցվածք և երգիծական տպավորության իրացման

զանազան ձևեր: Անեկդոտները տեքստեր են, որոնք իրենց մեջ են խտացնում կենցաղային գնահատողականությունը:

Գրականության ցանկ

1. Карасик В.И. Языковой круг: личность, концепты, дискурс. моногр. Волгоград: Перемена, 2002.
2. Пельтцер А. П. Происхождение анекдотов.//Сб. Харьк. Ист.-фил. о-ва. т.11. Харьков, 1899. С.57-58.
3. Санников В.З. Русский язык в зеркале языковой игры. – М.: Языки славянской культуры, 2002.
4. Химик В.В. Анекдот как феномен культуры. Материалы круглого стола 16 ноября 2002 г. СПб.: Санкт-Петербургское философское общество, 2002.
5. Шмелева Е.Я., Шмелев А.Д. Рассказывание анекдота как жанр современной русской устной речи. Труды Международного семинара Диалог 98 по компьютерной лингвистике и ее приложениям. Казань, 1998. Т.1. С. 262–71.
6. Щурина Ю.В. Речевые жанры комического // Жанры речи. – Саратов: Изд-во ГосУНЦ «Колледж», 1999. – Вып. 2.
7. Boxer D., Cortes-Conde F. From bonding to biting: Conversational joking and identity display// Journal of Pragmatics 27. -1997.

Жанровые признаки юмористического дискурса

В данной статье рассмотрен жанр “анекдота” поскольку он представляет особый интерес для коммуникативной лингвистики как особый источник исследования моделей коммуникативного поведения, позволяющий выявить социокультурные стереотипы. Анекдот несомненно заслуживает специального изучения. Современные анекдоты представляют собой многоплановое явление, которое выступает предметом лингвистического, литературоведческого, культурологического, социологического, психологического и историко-политического анализа.

ключевые слова: юмористический дискурс, анекдот, юмор, жанр.

Genre Features of Humorous Discourse

The presented article is dedicated to the research of genre features of humorous discourse. The anecdote is regarded as one of the forms of manifestation of mass stereotypes. The article studies linguistic, cultural and structural properties of anecdotes. Jokes are short narratives or riddles with a long introduction and a brief comic ending which impute a particular ludicrous trait or pattern of behavior to the butts of the jokes. Due to their brief content jokes are often based on means of linguistic economy, therefore many of them rely on stereotypes – simplified and settled concepts, held by one social group about another. The perception of a joke demands from the recipient the availability of some specific skill to restore the whole violated inferential chain, using the background knowledge and presupposition data.

Key words: humorous discourse, anecdote, humor, genre.